ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---- ---------- 2023 թվականի N ------- -Ն

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սերմերի և տնկանյութի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել՝

1) սերմերի հավաստագրման կարգը և այդ նպատակով օգտագործվող ձևաթղթերը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) տնկանյութի հավաստագրման ժամկետը, կարգը և այդ նպատակով օգտագործվող ձևաթղթերը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետությունում պարտադիր հավաստագրման ենթակա բույսերի տեսակների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի։

2. Խաղողը, ծիրանենին, ազնվամորենին պարտադիր հավաստագրման ենթակա են 2023 թվականի հոկտեմբերի 5-ից, հնդավորները, կորիզավորները, հատապտղատուները՝ 2024 թվականի փետրվար ամսից, ընկուզավորները, չոր մերձարևադարձայինները՝ 2024 թվականի սեպտեմբեր ամսից։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հոկտեմբերի 5-ից։

Հայաստանի Հանրապետության

վարչապետ՝ Ն. Փաշինյան